«Ռուս-Հայկական համալսարան» բարձրագույն կրթության միջպետական կրթական կազմակերպություն



Հաստատում եմ՝
Ռեկտոր՝ Է.Մ. Սանդոյան
№ 9 «15» Նոյեմբեր 2026թ

ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մասնագիտություն՝ 022801.00.6 «Արևելագիտություն»

Կրթական ծրագիր՝ 022801.01.6 «Արաբագիտություն»

1.ՀԻՄՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ

<u>022801.01.6 Արաբագիտություն</u> կրթական ծրագիր, իրագործվող «Ռուս-Հայկական համալսարան» բարձրագույն կրթության միջպետական կրթական կազմակերպության կողմից**:**

Բակալավրի կրթական ծրագիրը իրագործվում է առկա կրթության ձևով:

Կրթական ծրագրով ուսումնառության ժամկետը կազմում է 4 տարի:

Բակալավրի կրթական ծրագրի ծավալը կազմում է 240 կրեդիտ:

2. ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

2.1. Ծրագրի բովանդակությունը, նպատակի և խնդիրների մանրամասն նկարագրությունը, կրթական ծրագրի ակտուալությունը և յուրահատկությունը, տվյալ կրթական ծրագրի/մասնագիտության շրջանավարտների կարիքը աշխատաշուկայում:

Արաբագիտություն կրթական ծրագիրը նպատակաուղղված է խորքային և համապարփակ գիտելիքների փոխանցմանը արաբական աշխարհի պատմության, լեզվի, մշակույթի, գրականության, հասարակական ու քաղաքական համակարգերի վերաբերյալ: Ծրագիրը մշակված է այնպես, որ համապատասխանի արդի ակադեմիական և մասնագիտական պահանջներին՝ խթանելով ուսանողների տեսական և գործնական հմտությունների ձևավորումը: Հատուկ ուշադրություն է դարձվում արաբերենի խորացված ուսուցմանը՝ ինչպես գրավոր, այնպես էլ բանավոր մակարդակով, ինչպես նաև արաբական աղբյուրների հետ աշխատելու, թարգմանելու, վերլուծելու և մեկնաբանելու կարողությունների զարգացմանը:

Կրթական ծրագրի նպատակն է ձևավորել բազմակողմանի պատրաստվածություն ունեցող մասնագետներ, ովքեր ունակ են աշխատել միջմշակութային միջավայրում՝ որպես լեզվային և մշակութային միջնորդներ, ինչպես նաև իրականացնել հետազոտական և վերլուծական գործունեություն արաբական երկրների հետ առնչվող ոլորտներում:

Ծրագրի ակտուալությունը պայմանավորված է արաբական աշխարհի աճող դերով համաշխարհային քաղաքականության, էներգետիկ շուկաների, միջազգային հարաբերությունների և մշակութային երկխոսության ոլորտներում: Ակտուալ են նաև միգրացիոն, անվտանգության և կրոնական խնդիրների ուսումնասիրման անհրաժեշտությունները, որոնք պահանջում են բարձր պատրաստվածություն ունեցող արաբագետների ներգրավում:

Արաբագիտության կրթական ծրագրի յուրահատկությունն այն է, որ այն համադրում է դասական արևելագիտական մոտեցումները արդի տարածաշրջանային և աշխարհաքաղաքական զարգացումների ուսումնասիրության հետ: Ուսանողները ոչ միայն տիրապետում են լեզվին, այլ նաև ձեռք են բերում վերլուծական մտածողություն, միջմշակութային հաղորդակցման հմտություններ և տարածաշրջանային մասնագիտացում, ինչը թույլ է տալիս նրանց հանդես գալ որպես միջին ու բարձր մակարդակի մասնագետներ:

Շրջանավարտները պահանջարկ ունեն պետական կառավարման համակարգում (դիվանագիտական ծառայություն, խորհրդատվություն), գիտահետազոտական կենտրոններում, զանգվածային լրատվամիջոցներում, միջազգային կազմակերպություններում, ինչպես նաև մասնավոր հատվածում՝ կապված արաբական երկրների հետ գործարար, հումանիտար կամ մշակութային համագործակցության շրջանակներում:

2.2. Բակալավրի կրթական ծրագրի յուրացման մեջ մտնում են ուսումնական և արտադրողական պրակտիկաներ՝

- Ուսումնական պրակտիկայի ձևերը՝ Ներածական (Կրթական), Գիտահետազոտական աշխատանք
- Աշխատանքային պրակտիկայի ձևերը՝ Նախադիպլոմային պրակտիկա

2.3 Պետական ավարտական ատեստացիայի մասի մեջ կարող են մտնել՝

Վերջնական որակավորման աշխատանքի պատրաստում և պաշտպանություն

3. ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԿՐԹԱԿԱՆ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Գիտելիքները՝

1. Արաբական աշխարհի պատմության, մշակույթի, լեզվի և կրոնական ավանդույթների վերաբերյալ հիմնարար և մասնագիտական գիտելիքներ
2. Արաբական երկրների արդի քաղաքական, սոցիալ-տնտեսական և մշակութային գործընթացների համապարփակ պատկերացում
3. Արաբագիտության հիմնական գիտական ուղղությունների, աղբյուրագիտության և ուսումնասիրության մեթոդաբանության իմացություն

Հմտությունները՝

- *գիտելիքի կիրառման հմտությունները՝*

1. Արաբերենի ընթերցանություն, թարգմանություն և բանավոր հաղորդակցում գիտական, իրավական և տեղեկատվական տեքստերով
2. Վերլուծել և մեկնաբանել արաբական աղբյուրները՝ կիրառելով պատմագիտական, լեզվաբանական և սոցիոլոգիական մեթոդներ

- *ընդհանրական իմացական հմտությունները՝*

1. Արծարծել արևելագիտության հիմնախնդիրները բազմապիսի տեսանկյուններից
2. Ստեղծել, ձևակերպել և ներկայացնել գիտական տեսակետներ՝ հիմնված բազմաբնույթ տվյալների վրա

Կարողունակությունը (կոմպետենցիան)՝

ինքնուրույնությունը և պատասխանատվությունը՝

1. Ինքնուրույն կատարել աղբյուրների հավաքագրում և վերլուծություն
2. Կազմել որակյալ գիտական աշխատանքներ՝ առաջնորդվելով ակադեմիական ազնվության սկզբունքներով

Կրթական ծրագրի շրջանավարտների ակնկալվող մասնագիտական գործունեության տեսակները

- Գիտահետազոտական գործունեություն
- Թարգմանչական և վերլուծական աշխատանքներ
- Միջմշակութային միջնորդական աշխատանքներ (հասարակական կազմակերպություններ, դիվանագիտություն, ՁԼՄ-ներ)
- Միջազգային հարաբերություններում մասնագիտական վերլուծություն

Կրթական ծրագրի պահանջարկը.

«Արաբագիտություն» կրթական ծրագիրը կարևոր նշանակություն ունի Հայաստանի արտաքին քաղաքական և տարածաշրջանային կապերի զարգացման համատեքստում՝ հաշվի առնելով արաբական աշխարհի երկրների հետ քաղաքական, տնտեսական և մշակութային հարաբերությունների ընդլայնման հեռանկարները:

Մասնագիտությունը պահանջված է գիտահետազոտական և կրթական հաստատություններում, պետական կառավարման, դիվանագիտական և միջազգային կառույցներում, ինչպես նաև վերլուծական և թարգմանչական ոլորտներում: Շրջանավարտները կարող են զբաղվել արաբալեզու երկրների քաղաքական, տնտեսական, պատմական և մշակութային գործընթացների ուսումնասիրությամբ, վերլուծությամբ և խորհրդատվական գործունեությամբ:

Ծրագիրը նպաստում է արաբերեն լեզվին և արաբական աշխարհի պատմամշակութային առանձնահատկություններին տիրապետող մասնագետների պատրաստմանը, որոնք կարող են հանդես գալ որպես միջմշակութային հաղորդակցության միջնորդներ՝ խթանելով միջազգային երկխոսությունն ու համագործակցությունը: